

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Լայթսպորտ ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/04 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>Դարակաշարեր՝ նախատեսված փաստաթղթերի տեղադրման համար՝ համաձայն պայմանագրին կից ներկայացված նկարների: Դարակաշարերը պետք է պատրաստված լինեն երկաթյա կոնստրուկցիաներով, դարակները համապատասխան խտացրած 18 մմ հաստությամբ լամինացված փայտանյութից /ԴՍՊ/:</p> <p>Դարակաշարերը հավաքվում են տեղում հեղյուս մանեկային ամրացումներով: Դարակաշարի չափսերը. բարձրություն՝ 270 սմ (շեղում՝ +2 %), լայնություն՝ 150 սմ (շեղում՝ +2 %), խորություն՝ 32-35 սմ: Դարակների քանակը պետք է լինի 6 հատ՝ 40 սմ մեկ հաջորդականությամբ, կարգավորվող (7 սմ բարձրացնելի իջեցնելու հնարավորությամբ): Ստորին դարակը սկսվում է գետնից 15 սմ բարձրությունից: Ուղղահայաց մետաղական դետալները պետք է պատրաստվեն առնվազն 25x25 մմ չափի պողպատյա քառանկյուն խողովակներով, որոնց պատերի հաստությունը ոչ պակաս 3 մմ: Դարակաշարի ուղղահայաց դետալները պետք է ունենան առնվազն 50x50 մմ չափսերով ոչ պակաս 3 մմ հաստությամբ տակդիրներ (закладной): Հորիզոնական մետաղական դետալները պետք է պատրաստվեն առնվազն 25x25 մմ չափի պողպատյա անկյունակներով, որոնց պատերի հաստությունը ոչ պակաս 2,5 մմ, չորս անկյուններին ուղղահայաց եռակցված անկյունակներ 10 սմ երկարությամբ և 2 անցքով: Հորիզոնական դետալները ամրացնելու համար ուղղահայաց դետալները մի կողմում պետք է ունենան քառանկյուն անցքեր ողջ երկայնքով, մյուս հանդիպակաց կողմում կլոր անցքեր: Դարակաշարերը պետք է ունենան անցքեր պատին ամրացնելու համար՝ համապատասխան դետալներով: Դարակաշարի նմուշը նախապես համաձայնեցվում է Գնորդի հետ: Դարակաշարերը պետք է լինեն չօգտագործված: Դարակաշարերը մատակարարվում են Գնորդի</p>

կողմից բանավոր կամ թղթային կամ էլեկտրոնային փոստի միջոցով Վաճառողին տրամադրվող պատվերի հիման վրա՝ պատվերը ստանալու օրվան հաջորդող օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում՝ պատվերում նշված քանակով (քանակներով) և հասցեում (հասցեներում): Յուրաքանչյուր պատվերի ամբողջական կատարումը ներառում է դարակաշարերի տեղափոխումը, բեռնաթափումը, հավաքումը և տեղադրումը (ներառյալ անհրաժեշտ բոլոր դետալները և նյութերը), որոնք իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին: Դարակաշարերի համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Դատական դեպարտամենտի կողմից ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 1 տարի:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Лайтспорт в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом 77-ЕЦДЦ72Р-25/04 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	